

գձուձ ու ստորին ոյժերու: Աստուածորդին եկաւ ու ազատագրեց մարդը այդ ոյժերէն տեղ յատկացնելով անոր հոգեկան կարգին մէջ եւ այսպէս միացնելու մարդկային ճակատագիրը Աստուածայինին: Յետոյ, ի՞նչ է Քրիստոսի Ծննդեան բուն իմաստը, եթէ ոչ գերագոյն կապը Աստուծոյ հայրութեան եւ մարդուն որդիութեան մէջ: Վերջապէս, մեր Փրկչին Ծնունդը, տօնն է մարդուն՝ Աստուծոյ հանդիպման, Անառակ Որդւոյն իր հօրը տուն դարձի: Ճիշտ է որ Ան 2019 տարիներ առաջ օր մը ծնաւ, բայց տակաւին կրնայ ամէն օր ծնիլ մեր սիրտերուն մէջ եթէ բանանք զանոնք իր լոյսին, որ գերագոյն սէրն է: Անկասկած Քրիստոսի Ծնունդը իրաւ «Խորհուրդ մեծ և Սքանչելի» է:

Ն.Ա.Մ.

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Օտար երկրի մէջ հանդիպած հին բարեկամը կը նմանի երաշտէն ետք տեղացող անձրեւին:

Մարդիկ շահագործողը ինք եւս իր կարգին կը շահագործուի:

Վիրաւորանքները մոռցէ՛ք, բայց բարիքը՝ երբեք:

Հարցում մը հարցնողը ապուշ կը նկատուի հինգ վայրկեան, սակայն բնաւ չհարցնողը ապուշ կը մնայ յաւիտեան:

Իրա՛ւ ազնուականը միշտ համեստ է:

Մարդը կը ճանչցուի իր բարեկամ շրջանակէն:

Մարդուն իմաստութիւնը կամ ապուշութիւնը կը հասկցուի իր առաջին իսկ բառերէն:

Բարութիւնը բարիք կը բերէ:

Սիրող սիրտը միշտ երիտասարդ կը մնայ:

Հերոսութիւնը վայրկեան մը աւելի տոկալու մէջ կը կայանայ:

Կորսուածէն աւելի հաշուէ՛ թէ ի՞նչ մնացած է: